

Զատկական Սուրբ Պատարագներ Վիրահայոց թեմում

Մարտի 31-ին Հայ Առաքելական Ուղղափառ Սուրբ Եկեղեցին մեծ հանդիսավորությամբ տոնեց Տեր Հիսուս Քրիստոսի հրաշափառ Սուրբ Հարության տոնը: Զատկական Սուրբ պատարագներ մատուցվեցին նաև Վիրահայոց Թեմում:

1 / 9

Զատկական Սուրբ Պատարագներ Վիրահայոց թեմում

Տոնական օրերին ուխտավորագնաց այցելությամբ Աջարիայում էր գտնվում Վիրահայոց Թեմի առաջնորդ Գերաշնորհի Տեր Վազգեն եպիսկոպոս Միրզախանյանը : Սրբազան Հոր հանդիսապետությամբ շաբաթ օրը Բաթումիի « Սուրբ Փրկիչ » եկեղեցում մատուցվեց Ճրագալույցի Սուրբ Պատարագ :

Կիրակի օրը բազում հավատացյալների մասնակցությամբ Սուրբ Հարության տոնի առիթով Վիրահայոց թեմի առաջնորդ Տեր Վազգեն եպիսկոպոս Միրզախանյանը Բաթումիում « Սուրբ

2 / 9

Զատկական Սուրբ Պատարագներ Վիրահայոց թեմում

Փրկիչ
»
եկեղեցում
մատուցեց
տոնական
Սուրբ
Պատարագ
:
Պատարագի
ընթացքում
Սրբազան
Հայրն
ընթերցեց
Սուրբ
Հարության
տոնի
առիթով
Ն
.
Ս
.
Օ
.
Տ
.
Տ
.
Գարեգին
Բ
Ամենայն
Հայոց
Կաթողիկոսի
հայրապետական
պատգամն
ու
օրհնությունը՝
հղած
աշխարհասփյուռ
հայ
ժողովրդին՝
ավետելով
«
Քրիստոս
յարեաւ
ի
մեռելոց

3 / 9

Զատկական Սուրբ Պատարագներ Վիրահայոց թեմում

»: Տեր Հիսուս Քրիստոսի հրաշափառ Հարության տոնի առիթով տոնական Սուրբ Պատարագ մատուցվեց նաև Սամցխե-Ջավախքում՝ ընդհանուր առաջնորդական փոխանորդ Տեր Բաբգէն աբեղա Սալբիյանի գլխավորությամբ: Մարտի 30-ին, Ավագ շաբաթ օրը, Թբիլիսիի Սուրբ Էջմիածին եկեղեցում երեկոյան մատուցվեց Ճրագալույցի Սբ. Պատարագ: Պատարագիչ քահանան՝

4 / 9

Զատկական Սուրբ Պատարագներ Վիրահայոց թեմում

Թբիլիսիի առաջնորդանիստ Սուրբ Գևորգ եկեղեցու հոգևոր հովիվ Տեր Նարեկ Ղուշչյանը հավարտ Պատարագի ազդարարեց Փրկչի հրաշափառ Հարության ավետիսը: Այնուհետև Թբիլիսիի Սուրբ էջմիածին եկեղեցու հոգևոր դասը զանգերի ղողանջների ներքո, հավատացյալների շնորհավորանքների ուղեկցությամբ դուրս գալով եկեղեցու բակ, տնօրինեքի կարգ կատարեց «Հայարտուն» կրթամշակութային կենտրոնի նստավայրում

5 / 9

Զատկական Սուրբ Պատարագներ Վիրահայոց թեմում

: Կիրակի օրը հավատացյալներով լեփ-լեցուն էր Թբիլիսիի Սուրբ Էջմիածին եկեղեցու բակը և մերձակա տարածքը: Եկեղեցում կատարվեց ժամերգություն, Անդաստանի արարողություն, ապա մատուցվեց Սուրբ Պատարագ՝ նվիրված Տեր Հիսուս Քրիստոսի հրաշափառ Հարությանը: Տոնական Սուրբ Պատարագին ներկա էին Վրաստանի խորհրդարանի անդամներ Գիգի Ծերեթելին,

6 / 9

Զատկական Սուրբ Պատարագներ Վիրահայոց թեմում

Ռուսլան Պողոսյանը, Վրաստանի վերինտեգրման հարցերով պետական նախարար Պաատա Զաքարեիշվիլին, Վրաստանի պատժա-կատարողական, պրոբացիայի և իրավաբանական օգնության հարցերով նախարար Սոզար Սուբարը, Վրաստանի Անվտանգության խորհրդի փոխքարտուղար Թամար Կինծուրաշվիլին, Վրաստանի նախագահի խորհրդական Վան Բայբուրթյանը, Վրաստանում ՀՀ դեսպանության խորհրդական Լևոն Թորգոմյանը, համայնքային

7 / 9

Զատկական Սուրբ Պատարագներ Վիրահայոց թեմում

պաշտոնյաներ և բազում հայորդիներ: Պատարագիչ քահանան շնորհակալական խոսքեր ուղղեց Վրաստանի պաշտոնյա այրերին, ովքեր ի նշան հարգանքի եկել էին վիրահայությանը շնորհավորելու Հիսուս Քրիստոսի հրաշափառ Հարության տոնի առիթով: Սուրբ Զատկի կապակցությամբ վիրահայությանը շնորհավորական ուղերձներ էին հղել Վրաստանի նախագահ Միխեիլ Սաակաշվիլին և Վրաստանի վարչապետ Բիձինա Իվանիշվիլին

8 / 9

Զատկական Սուրբ Պատարագներ Վիրահայոց թեմում

:
Վիրահայոց
Թեմում
Սուրբ
Հարության
տոնի
նշանավորումը
լուսաբանվեց
վրացական
զանգվածային
լրատվության
տարբեր
միջոցներով
:

9 / 9